**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ( Կ-158-07.02.2022-ԱՍ-011/0) ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | ՀՀ ԱԺ պատգամավոր<br><br>Թադևոս Ավետիսյան | «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման եվ աջակցության մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ( Կ-158-07.02.2022-ԱՍ-011/0) 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածում «ծրագրեր և դրա իրականացման ժամանակացույցեր» բառերը փոխարինել «ծրագրեր՝ դրանց իրականացման ժամանակացույցերի, ֆինանսավորման աղբյուրների ու չափերի, ակընկալվող արդյունքների սահմանմամբ» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 2. | ՀՀ ԱԺ պատգամավոր<br><br>Թադևոս Ավետիսյան | «Մարդկանց թրաֆիքինգի եվ շահագործման ենթարկված անձանց նույնացման եվ աջակցության մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին» հհ օրենքի նախագծի ( Կ -158-07.02.2022-ԱՍ-011/0) | | | |
| 3. | ՀՀ ԱԺ պատգամավոր<br>Թադևոս Ավետիսյան | «մարդկանց թրաֆիքինգի եվ շահագործման ենթարկված անձանց նույնացման եվ աջակցության մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» հհ օրենքի նախագծի ( Կ -158-07.02.2022-ԱՍ-011/0) նախագծի 4-րդ հոդված | Նախագծի 4-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի հրամանով» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| 4. | ՀՀ ԱԺ պատգամավոր<br>Թադևոս Ավետիսյան | «Մարդկանց թրաֆիքինգի եվ շահագործման ենթարկված անձանց նույնացման եվ աջակցության մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» հհ օրենքի նախագծի (Կ -158-07.02.2022-ասս-011/0) նախագծի 8-րդ հոդված, 3-րդ մաս | Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում «և ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ մինչև 2023 թվականի առաջին եռամսյակում» բառերը փոխարինել «՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |